

Այս հանած է արեմտեան նահանգների կրօնական գործերից: Ես ծանոթացել եմ նաև կալմիկ ժողովրդի կրօնական գործերի հետ: ուր նոյնպէս հաւատոյ ազատ դաւանութեան թոյլատրող օրէնքը չի կատարուել անկասկած: և այդ հանգամանքը ոչ մի կերպով չի կարելի արդարացնել, քանի որ կալմիկները երբէք անկորդութիւն չեն արել: Տեղական իշխանութիւնը կալմիկներին պարբերաբար արգելում է տաճարներ շինել, թէև նոքա դուրս համար թէ իրաւունք ունին և թէ միջոցներն:

— Օրուայ հարցերից մէկն է Հոգևոր դպրոցներն աւարտածներին համալսարան բնդունելու պահանջը: Իւր ժամանակին, ասում է „РУССКОЕ СЛОВО“ լրագիրը, Կոմս Դ. Ա. Տոլստոյը լուրջ ուշադրութիւն դարձրեց հոգևորականութեան նիւթական դրութեան վերայ և միջոցներ ձեռք առաւ, որ մի ծխի մէջ այնքան հոգևորական լինի որքանի կարիք կայ իսկապէս: Սակայն քանի որ քահանաների և սարկաւազների որդւոց համար փակ է բարձր ուսման ճանապարհը, և նոքա դպրանոց աւարտելուց յետոյ հարկադրուած են հոգևորական դասի մէջ մնալ և քահանայութեան ձգտել՝ ննարաւորութիւն չի լինի հոգևորականներին թիւը սահմանափակելու: Այդ պատճառով լրագիրն առաջարկում է, դպրանոցաւարտներին թոյլ տալ բոլոր բարձր ուսումնական հաստատութիւնները մտնելու մանաւանդ որ մի քանի համալսարաններում, ինչպէս Տոմսկի և Իւրեկի՝ այդ թոյլատուութիւնն արդէն կայ:

— Մի շարք ռուս քահանաներ աշխատում են ժողովրդի մէջ տարածել կրօնական—բարոյական բովանդակութեամբ գրքեր, որոնցից այնպէս խորշում են շատերը: Այս նպատակով, ասում է մի դիւղական քահանայ „Руководство для сель. паст.“ հանդիսում, օգտակար կլինէր բոլոր դպրոցներին կից գրավաճառանոցներ բանալ: Դորա փորձն արել է ինքը, և բերած գրքերը կարճ միջոցում ծախուել են:

ԿԼԹՈՒԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ինչպէս յայտնի է «Արարատի ընթերցողներին» փետրուարի 18-ին հանդիսաւոր կերպով տօնուեց Աւոն ԺԳ. պապի գահակալութեան քսանհինգամեակը:

Թէև յօրելեանի օրերը անձրևային և խոնաւ էին, սակայն արդեւ չեղան հանդէսներին: Պապի ս. Պետրոս եկեղեցին իջնելու օրն արդէն առաւօտից ժողովուրդի մեծ բազմութիւն խռնուած սպասում էր սրտատրուի դէթ մի անգամ էլ նայելու «աշխարհի իշխանի» վերայ: Ժամը 11¹/₂-ին պապը պատգարակի վերայ բազմած իջաւ եկեղեցի: Տաճարը զարդարուած էր ծիրանիով, ոսկեհոռ հանդերձանքով. մութ էր և նեղուածք. ներկայ էր մօտ 100,000 մարդ, որ ծծելու օդ չէր գտնում և բոլորի երեսի քրտինքը ջրի պէս թափուում էր: Երբ պապն երևաց՝ բոլորը միաբերան աղաղակեցին. „evviva il papa!“ և ժամանակ ժամանակ բացականչում էին. „evviva il papa re!“ (կեցցէ թագաւոր պապը): Հանդիսաւոր դնացքին մասնակցում էին քառասուն հինգ կարդինալ, երկու հարիւր յիսուն եպիսկոպոս, անթիւ քահանաներ և կուռանք: Հանդէօր առանց անախորժութիւնների անցաւ:

„Новости“ լրագրի Հռովմի թղթակիցը հետեւեալ մանրամասնութիւններն է գրում: Հռովմում անսովոր կենդանութիւն է տիրում: Քաղաքը լցուած է «տարերկրացիներով» — ճանապարհորդներով և ուխտաւորներով: Վերջիններս Հռովմ են եկել կաթոլիկ աշխարհի ամենահեռաւոր ծայրերից, որպէս զի իրենց յարգանաց հաւատովքը մատուցանեն պատկառելի յորելեարին: 94-ամեայ անընկճելի ծերունին ահա երկու շաբաթ շարունակ շնորհակալութիւններ է ընդունում, որոնք յաճախ թանկագին ընծաների հետ են մատուցուում: Լևոն ԺԳ. ոչ միայն կաթոլիկ աշխարհի սէրն ու համակրութիւնն է վայելում, այլ և նոցա, որոնք մօտիկ ծանօթ են այս հազուադիւտ խելքի աէր մարդու կեանքին և անուպառ եռանդին: Քսանհինգամեայ անխօջ գործունէութիւնը, որ նա ունեցել է պապական աթոռ բարձրանալուց յետոյ, չթուլացրեց նորա երկաթեայ կազմուածքը. նորա միտքը կենդանի է դեռ և պարզ, ինչպէս երիտառարդութեան ժամանակ: Կաթոլիկ աշխարհը սրտեռանդն ցանկութիւն է յայտնում, որ նորա պողաբեր դործունէութեան տարիները դեռ երկարին:

Թեթև կերպով մրսած լինելով, որի հետեանքը հապն էր, պապը՝ եթէ լօէր իւր բժշկապետ Լեպպօնին, այս հանդիսաւոր օրերին պէտք է իրեն շատ զգոյշ պահէր: Սակայն նա, վստահ իւր ոյժերի վերայ, մարտի 1-ին ընդունում է կարդինալներին և մինչև իսկ հանաքներ է անում նոցա հետ. «Այս ինչքան կարդինալներ են, ասում է նա ծիծաղելով, ինձ այնպէս է թուում, որ ես կոնկլաւումն եմ. այս, ժամանակն է, շատ յոգնեցի» և

վերջացրեց իւր խօսքն ատելով, որ արդէն ինքը իւր ոյժերին չի հաւատում, որչափ և առողջ և առոյգ երեսը իւր արտաքինը: Ապա խօսք քաց արաւ իւր իշխանութեան և զանազան կրօնական հարցերի մասին: Բոլոր կարգինաւները մէկ մէկ զըրոյկ ստացան յօրէնարից, և Իննոկենտիոս Գ.-ի դեռ չտպուած զատկական ձառերը: Պապը ոգևորուած խօսեց եկեղեցու ապագայի մասին, կարդինաւներին խորհուրդներ տուաւ, նկատողութիւններ արաւ, և այն ատիճանի հրապուրուեց այդ խօսակցութիւններով, որ մոռացաւ իւր առողջութեան հոգսը. կարդինաւներից մէկը համարձակուեց յիշեցնել նորան այդ, և նա շնորհակալութիւն յայտնելով հեռացաւ հանգստանալու:

— Անցեալ փետրուարի 27-ին Ֆրանսիական պալատում մեծ հակաճառութիւններ առաջ բերեց փախուած կրօնական կարգերի դպրոցները նորից բանալու խնդիրը: Նիստին նախագահում է Բուրժուան. բոլոր տեղերը թռնուած են. նախարարներին նստարանների վերայ բաղմած է նախագահ—նախարար Ամբր. Խօսում է արքէ Գայրօն, որ առաջարկում է դպրոցների խնդիրը տալ ի քննութիւն մի առանձին յանձնաժողովի: Սկսուող վիճաւանութիւնները, ասում է նա, ամէն մի բարի կաթոլիկի համար խիտտ վիրաւորական են: Այստեղ կրօնական կարգերի դոյութեան խնդիրն է դրոււմ: Այս հանգամանքը պէտք է վշտացնէ և հառաբակապետականներին, որովհետեւ եղելութիւնը սարսափելի կերպով ռանահարում է խղճի և ուսուցման ազատութիւնը: Կրօնական կարգերի խրատիլաւը այլևս ոչ ոքին չի վախեցնի, նոյն խոհ ձեզ, պարօններ, որ նստած էք ձախ կողմում: Այստեղ խօսք լինել չի կարող այն քաղաքական խնդիրների մասին, որոնցով մեղադրում են կրօնական կարգերին. մի բան կայ ամէնից անհրաժեշտ՝ այն, որ փախուած կրօնական կարգերի անդամներին մի կտոր հաց ճարելու յարմարութիւն տրուի: Յեղափոխութիւնն այս մասին հոգաց: Բացի այդ, դեռ կան նոցա խնամած ծերունիներ և հաշմանդամներ: Սրանց ի՞նչ անել: Յեղափոխութիւնն այս էլ էր ի հաշիւ առել:

Գայրօն յիշեցնում է և կրօնական կարգերի կրած նիւթական վնասները, որոնք այժմ ծանրանում են ուրիշ բնկերութիւնների վերայ: Բարիէի ղեկուցումը, որի առթիւ սկսուել են այս հակաճառութիւնները, ի հաշիւ չառնելով կրօնական կարգերի փախուելու միջոցին կրած մեծ զրկանքները՝ զանց է արել յիշելու նաև այն, որ կրօնական կարգերը արտասահմանում էլ դպրոցներ ունեն: Այս խօսքի վերայ Բարիէն կամենում է հակաճառել, քայց Գայրօն քացականչում է. «Դուք ինձ արդելում էք խօսել,

որովհետեւ վերադառնալու եմ կրում»։

Ապա վեր է կենում խօսելու Պերայի, որ պաշտպանում է կրօնաւորական կեանքը և կրօնաւորներին, առարկելով, որ բարձրագոյն ազգերի արշաւանքների ժամանակից ի վեր կրօնաւորները միշտ եղել են «խեղճերի պաշտպաններ, ժողովրդի գաստիաւրախներ, քաղաքակրթութեան մարտիրոսներ», որ վանական դպրոցները դարգացնում են և ոչ այլապէս ու միայն միայնակ ուղղութիւնով է բաժնիէն հաւատացնելու «Խնչ իրաւունքով, ասում է Պերայը, դուք պարիսներ և թշնամիներ էք համարում ձեզ նման քաղաքացիներին։ Սա սրտերազմ է ընդդէմ եկեղեցու և կրօնի, բայց թաղուն պատերազմ ... դուք սպանում էք ժողովրդի մէջ գէպի ուրիշ իրաւունքն ունեցած յարգանքը։ Ձեր օրէնքները ոչ թէ իրաւունքի ներշնչումներ են, այլ կուսակցական թշնամութեան։ Մտածեցէ՛ք այն մասին, թէ ինչպիսի՛ երկպառակութիւն էք սերմանում ժողովրդի մէջ»։

Բարտուն պատասխանում է. «Պէտք է վերջ դնել կրօնական կարգերի այն ազահութեան, որ մարդու համբերութիւնից հանում է։ Դուք հարցնում էք, թէ մենք ո՞ւմ անունով ենք խօսում։ Մենք խօսում ենք ընտրողական օրէնքի անունով։ Այն, ինչ որ կայսրութիւնը արաւ, հասարակապետութիւնը չեւանի։ Ես չեմ շօշափում այն խնդիրը՝ արդեօք կարգերը քաղաքականութեամբ զբաղւում են թէ ոչ։ Գիտեմ սակայն, որ նորոշեն խնայի ոչ հասարակապետութեան, ոչ նախագահին, ոչ ժողովրդին։ Ահա մի զրբոյի, որը կազմել է մի եզուիտ. այդ զրբոյի հասարակապետութեան նախագահի դէմ ամենաստորին և խիստ վիրաւորական մեղադրանքների ժողովածու է։ Այն ինչ երեք տարի առաջ մի այլ եզուիտ հրապարակաւ դուրս բերեց այն Փրանսիացիներին, որոնք իրենց հայրենիքի դէմ էին կռուում»։ Ի վերջոյ Բարտուն յայտնում է, որ ինքը ղեկուցատուի հետ համամիտ է, որ պէտք է դպրոցները բանալու հակառակ ձայն տալ։ Հասարակապետականները նորան մեծ ցոյցեր արին՝ յայտնելով իրենց շնորհակալութիւնը։

Այս մի բանի անգամ է, որ կաթոլիկութիւնը պարտութիւններով է թողնում Փրանսիական պալատը։ Երբ խնդիրը գալիս է կրօնական կարգերին, ամբիոնի վերայ են երևում այնպիսի բանախօսներ, որոնց անունը շատ չի լսուում, բայց որոնք շեշտակի հարուածներ են հասցնում կրօնական կարգերին, պապականութեան, կարծես ուղեւոր այն թոյնը թափել, որ հաւաքուեք է դարբերից ի վեր Փրանսիական ժողովրդի սրտում։

Новости-ի թղթակիցը ասում է, որ Բարտուի ճառը կրկին

անգամ ապացուցանում է, թէ հասարակապետականները զինուորեալ կաթոլիկութիւնից վախենալու ոչինչ չունին, Բարտոլոմէոս մեծամասնութեան զգացմունքներին արձագանք հանդիսանալով ասաց իւր որոտալի ճառը, որը կեանքի և մահուան կռիւ է քարոզում կաթոլիկութեան դէմ և ցոյց տալիս, որ անհրաժեշտ է կրօնական կարգերի դպրոցները կրկին բանալու խնդիրը մերժել: Հակադաս կուսակցութիւնը քննիչ յանձնաժողովի պարագլուխ Բաբիէին մեղադրում է, որ նա մի քանի նշանաւոր փաստաթղթեր պալատին չի ներկայացրել, որոնց մէջ և անգլիական դեսպանի նամակը Բենետիկեանների մասին, թէ նա իւր ղեկուցումը կազմելու ժամանակ օգտուել է նախկին հրէայ պատգամաւոր Վամիլլա Դրէյֆուսի ցուցումներից: Այն ինչ Բաբիէն փաստաթղթեր չի պահել, անգլիական դեսպանի նամակը տպուած է լրագիրներում: Վամիլլա Դրէյֆուսը ոչ մի մասնակցութիւն չունի այդ զեկուցման մէջ:

Նոյն լրագրի Պարիզի թղթակիցը մարտի 5-ին հաղորդում է, որ հասարակապետականները 300 ձայնով հակառակ 257-ի մերժեցին կրօնական կարգերի խնդիրները ուսումնարանների վերաբանալու նկատմամբ, որով և մահու դատաւիճիւ արձակուեցու նոցա դէմ՝ այն է, ցրուել բոլոր այդ կարգերը: Նախարար—նախագահ Պոմբի ճառը, որ հակառակ կուսակցութեան հանած աղմուկներից անկարելի էր լսել, ձայների առաւելութեամբ որոշուած է տպել և բոլոր հաստատութիւններին մէջ կայցնել:

— Ֆրանսիական „Matin“ լրագիրը հաղորդում է, որ Ֆրանսիական հասարակապետութեան և Վատիկանի յարաբերութիւնները մինչ այն աստիճան լարուած են, որ հեշտութեամբ կարող է նրանց մէջ ընդհարում առաջանալ: Զորս դար է ահա, որ Ֆրանսիան և Վատիկանը վիճում են այն մասին, թէ նրանցից որի՞ն է պատկանում Ֆրանսիայում եկեղեցական թափուր պաշտօններին եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ նշանակելու իրաւունքը: Մինչև նապոլէօն I պապերն այդ իրաւունքը սեփականել էին իրենց, իսկ այնուհետև Ֆրանսիական կառավարութեան և պապականութեան փոխադարձ համաձայնութեամբ գլուխ եկաւ մի դաշնադրութիւն, որի 4 և 5 յօդուածների զօրութեամբ Ֆրանսիական կառավարութիւնն էր նշանակում եկեղեցական բարձրաստիճան պաշտօնեաներին պաշտօնների մէջ, և ապա հաստատուում էին նրանք պապի հաւանութեան թղթով: Բայց առաջին անգամ 1872 թուին նկատուեցաւ, որ պապերն իրենց կոնդակների մէջ գործ են ածում լատինական մի դարձուած որից կարելի էր հետեցնել, թէ պա-

պերին է վերապահուած Թրանսիայում բարձրատիճան եկեղեցականներին ինչպէս այս կամ պաշտօնի մէջ նշանակելու, այնպէս և նրանց հաստատութեան իրաւունքը: Իսկ այս հանգամանքը միանգամայն հակառակ է վերոյիշեալ դաշնագրութեան առաջ բերուած յօդուածներին մտքին: Վերջերս դարձել է այս Թրանսիայում հրատապ խնդիրներէց մէկը և Ֆրանսիական հասարակապետութիւնը օր առաջ ցանկանում է ազատուել պապականութեան գերիշխանութիւնից:

ԱՆԳԼԻԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Մարտի 9-ին (ն. տ.) Կենտրոնըրիում իւր մահկանացուն կնքեց անգլիացի նշանաւոր քարոզիչ և աստուածաբանական գրքերի հեղինակ Թրեգերիի Վիլիամ Ֆարրար 72 տարեկան, հասակի մէջ: Ֆարրար ծնուել է 1831 թ. Հնդկաստանի Բոմբէյ քաղաքում: Պատանի Ֆարրարը իւր հօր հետ անցնում է Անգլիա, որտեղ իւր բարձրագոյն կրթութիւնն աւարտելուց յետոյ, նուիրում է իրեն հոգևոր կոչմանը և աշխատում է այդ ասպարիզում: 1857 թուին ձեռնադրուում է քահանայ և շուտով մեծ հռչակ է ստանում, իբրև նշանաւոր քարոզիչ և հռետոր: Իբրև քարոզիչ նա վայելում է այնուհետև մեծ հեղինակութիւն ոչ միայն Անգլիայում, այլ նաև Անգլիայից դուրս ուրիշ քրիստոնեայ երկրներում:

Ֆարրարի զրաւոր երկասիրութիւններից նշանաւորներն են՝ Լեզուի ծագումը, Մարդու անկումը և ուրիշ քարոզներ, Յիսուսի կեանքը, Պօղոս առաքեալի կեանքն ու գործերը, Քրիստոնէութեան առաջին օրերը, Եկեղեցական հայրերի կեանքն ու գործերը ևլն: Նրա աշխատութիւնների մեծագոյն մասը թարգմանուած են ռուսաց լեզուով, մի երկուսն էլ հայերէն:

